Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 27-ի N 641 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններին նախնական զինվորական պատրաստության նպատակով ուսումնական զենքի հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ուսումնական զենք է համարվում միայն ուսումնական նպատակների համար օգտագործվող սարքը կամ առարկան, որը հնարավոր չէ վերանորոգելով դարձնել աշխատունակ և կրակելու համար պիտանի:

3. Ուսումնական զենքի անհրաժեշտ քանակության հաշվառումը կատարում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

4. Հաշվառման հիման վրա, ուսումնական զենքի պահանջվող քանակությունը ճշտելուց հետո, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն ստանալով հայտը Հայաստանի Հանրապետության ներքին զորքերի նախարարության ոստիկանությանը (այսուհետ՝ ոստիկանություն) հատկացնում է Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների համար նախատեսված ուսումնական զենքը:

6. Ուստիկանությունն ուսումնական հաստատություններին ուսումնական զենքի հատկացումն իրականացնում է ուստիկանության կառուցվածքային տարածքային ստորաբաժանումների միջոցով:

7. Ուստիկանության կառուցվածքային տարածքային ստորաբաժանման համապատասխան ծառայողն ստուգում է ուսումնական հաստատություններում ուսումնական զենքի պահման պայմանները և կազմում համապատասխան ակտ:

8. Զենք պահելու պայմանների համապատասխանության դեպքում ուսումնական զենքը հանձնվում է ուսումնական հաստատության զենքի պահպանության համար պատասխանատու անձին և սահմանված կարգով կատարվում է հաշվառում:

9. Ուսումնական հաստատությունները վարում են ուսումնական զենքի, այդ թվում՝ նաև ի պահ հանձնված ուսումնական զենքի հաշվառման մատյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

28.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ